ներ (1905), Հօրոտ-Մօրոտ (1907), նաեւ Թեմ. Դպրանոցի, Հոգեւորականաց Խնամատարութեան և Հայազգի աղքատաց եկեղ. հոգաբարձութեան **հաշիւները** : — Հ. Գաֆիրանեան Նոր Նախիջեւանի մէջ տպուած կը նշանակէ **Մեծագործութիւն** (1896) և **Այբբենարան**մը (1897) : — Վերջին տարիներս այս քաղաքը հրատարակուած են **Մեր Ձայնը** և **Լոյս** պարբերականները:

ԱՍՏՐԱԽԱՆ (**Աժդէրխան** կամ **Աժդարխան**) փոխադրուած է

318. **Յովսէփ Ա. Արզուխանեանի** տպարանը՝ Նոր Նախիջեւանն : **1796** ին հոնկէ լոյս ընծայուած մեծադիր 9 էջնոց գրքոյկը եղած է **Խօսք** «ասացեալ ի Յ. պսակազգեաց Ս. Արք. Եպսկ.է՝ հիւսիս. կողմունս եղեալ ամենայն ազգիս Հայոց» — քարո՛զ զոր նոյն եկեղեցականը 5 Ապր. 1796 ին խօսած է Ղզլարի Ա.ածին եկեղեցին, «ի ներկայութեան Բարձր Գերազանցութեան Ենարալ Անշէֆ, և զանազան նշանակիր Կաւպեր Իվան Վասիլիչ Գուդովիչին, և այլ զօրապետաց. ի ժամանակի չուելոյն Զօրացն» եւն. :

319. **Տպ. Ա. Էջմիածնի** անուամբ Ատրպատականի մէջ տպուած կայ **Հրաւէր** «ի Խորհրդարանէ Ռուսաց Ա.ազնչոց ժողովոյն» գիրքը **1821** ին, մինչ միւնոյն քաղաքին մէջ, առանց տպարանի յիշատակութեան, ունինք հետեւեալները. — **Ժամագիրք (1818)**, **Նորագոյն զրոյցք** (թրգմ. ռուս. Արր. սրկզ. Ա.ծ ատրեան) 1820, **Համառօտ վարդապետութիւն** ուղղափառութեան (Գ. Պատկանեաց) 1821, **Պատմ.** Աղեքսանդրի Մակեդոնացւոյ 1827 :

ՄՕՍԿՈՎ (հին ուղղութեամբ ՄՈՍԿՈՎ. կամ ՄՈՍԿՎԱ) հայ ուսումնասիրական գիրքերու հրատարակութեան տեսակէտով՝ կը ներկայանայ մեզ կեդրոնավայր մը ուր հայազգի մտաւորականներ 1820ական թուականէն սկսեալ մղում տուած են բանասիրական-պատմական ճիւղին և որոնց մէջ փայլած են Պօղոսեցին Միքայէլ Ն. Վ. Սալլանթեանց, Զուդայեցին Մկրտիչ Էմին Յովսէփեան, Մագիստրոս և Զարմայր Մսերեանք, Նորոգ հանգուցեալ նշանաւոր բանասէր Գրիգոր Խալաթեանց եւայլն :

320. **Օգոստոս Սեմէնի** տպարանն լոյս կ'ընծայուին. — **Ազգօգուտ յայտարարութիւն** «Յովակիմայ Եղիազարեան առ լուսաւորչակրօն ազգակիցս իւր . . .» **1820**, **Բառարան ռուս. հայ.** (Յր. քնդ. Ալամդարեանց) 1821, **Գերականութիւն**(ներ) գրբ. և ռուս., **Կտակ** Տեառն մերոյ (թրգմ. ռուս.) 1827, **Պատասխանիք** «առ. անիրաւ զրպարտութիւնս իմաստակի . . .» գրբ. քերականութեան քննադատութեան առթիւ (1828), **Մուզայք Արարատեան** (1829) : – Յաջորդ տարին, առանց տպարանի յիշատակութեան լոյս տեսած են **Միս Աւաբ ծառայի** պատմութիւն և **Հուչակաւոր աղօթք** Ներսիսի (12 լեզուով) : – Օգսենտեան Սեմէնի տառերը գնած է յետոյ Վլադիմիր Գոտիկ :

321. **Տպարան "Ներմարանի Հայոց Տեարց Լազարեանց,,** — Համանուն հոյակապ կրթարանին, տպարանին և Մոսկուայի տաճարին հիմնողը եղած է անմահն ՅՈՎԱԿԻՄ որ ԼԱԶԱՐԵԱՆՑ բարեհամբաւ տոհմը պանծացուցած է՝ Հայութեան մատուցած իր գնահատելի ծառայութիւններով որոնց մասնակցած են իր մեկենաս եղբայրը ՅՈՎՀԱՆՆԷՍ և յաջորդներ : – **1829** ին հիմնուած այս գործատունէն լոյս ընծայուած են. — **Համառօտ բնութիւն** Քրիստ. հաւատոյ, **Կրօնագիտութիւն** (1831), **Սկզբունք** քրիստ. վրդպ. (1833), Նոր Կտակարան (1834, նաեւ Բ. տիպ), **Գերականութիւն** (Յ. Եղիազարեան = Լազարեանց) 1839, **Սաղմոս** (1842), **Գերականութիւն** (Մ. Էմին) 1846, **Ճառ** (1848), **Ընտիր հատուածք** (1849, որ 61 ին նորէն տպուած է), **Մեղու Հայաստանի** ԺԹ. և ԻԸ. տարիները, **Եղբայր եւ քոյր**, **Հսկայական ձեռքեր**, **Արքայադուստր** Վարդենի (1879), **Մովսէս Խորենացին** և Հայոց հին վէպերը (1871), դասագիրքեր, եւն. եւն. : — Տպարանը հետզհետէ կատարելագործուած է եւրպ. մամուլներով և Մխիթարեանց վայելուչ տառերով որոնք կը պատրաստուին իր սեպհ. ձուլարանին մէջ և որոնցմէ կը ծախուին նոյն իսկ ուրիշ քաղաքներու հայ գործարանաց : Վերջին Օ. Հերրիկ գնած է Լազարեան ճեմարանի «մայրերը»:

322. **Վլադիմիր Գոտիկ** (կամ **Վոլդեմար**) ֆրնս. գրավաճառն Օ. Սեմէնի կազմածքը ձեռք ձգելով՝ իրը կը բանայ և կը տպէ **Հրահանգ** քրիստ. հաւատոյ, **Վէպք**